«Ա.Դ.Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
«Армянский центр защиты прав человека им. А.Д.Сахарова»
«The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre» NGO

Սարմենի 1, Երևան 0009 1 Sarmen St., 0009 YEREVAN, ARMENIA РА, 0009 ЕРЕВАН, ул. Сармена 1
(37410) 54-29-36, 58-78-64, 56-15-05 Fax: (37410) 561505 e-mail: sakhfd@arminco.com , www.sakharovcenter.org

10 օգոստոսի 2018 թ. Ե-2563

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ Հրանտ Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան,

Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնը պատրաստվում է իրականացնել մոնիտորինգ հաշմանդամություն 1-ին խումբ ունեցող միայնակ անձանց և միայնակ տարեցների սոցիալական վիճակի վերաբերյալ: Մոնիտորինգի նպատակն է առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարություն՝ վերոնշյալ կարիքավոր անձանց սոցիալական վիճակի և կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ:

Այդ կապակցությամբ խնդրում ենք Ձեր իրավասությունների շրջանակում մեզ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Առաջին խմբի հաշմանդամություն ունեցող միայնակ անձանց և միայնակ տարեցների թվաքանակը:
2. Ո՞ր կառույցներն են (պետական, հասարակական) ծառայություններ մատուցում նրանց:
3. Ինչպիսի՞ ծառայություններ են մատուցվում նրանց տնային պայմաններում: Արդյոք դրանք վճարովի՞ են, թե՞ անվճար:

Կանխավ շնորհակալություն:

Հուսով ենք՝ համատեղ ուժերով հնարավոր կլինի բարելավել խնամքի կարիք ունեցող հաշմանդամության 1-ին խմբի միայնակ անձանց և միայնակ տարեցների սոցիալական վիճակը, որն էլ իր հերթին հնարավորություն կտա աշխատատեղեր ստեղծել Ձեր մարզում:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն՝ Լևոն Ներսիսյան